

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԼԻՄԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Կլիմայի փոփոխությունը գլոբալ մարտահրավերներից է: 1970-ականներից ի վեր աշխարհում տեղի է ունենում կլիմայական պայմանների փոփոխություն, ինչը դրսևորվում է ջերմաստիճանի բարձրացմամբ և տեղումների կրճատմամբ: Մարդու գործունեության արդյունքում նշանակալիորեն ավելացել են ջերմոցային գազերի (այսուհետ՝ ՋԳ) արտանետումները, նպաստելով ջերմոցային էֆեկտի ուժգնացմանը, ինչը հանգեցրել է Երկիր մոլորակի մակերևույթի և մթնոլորտի լրացուցիչ տաքացմանը: Ներկայումս դիտվող և ապագայում սպասվող կլիմայի փոփոխությունը պատճառ է դառնում մարդածին և բնական համակարգերի համար համատարած և անդառնալի հետևանքների, պարունակում է ռիսկեր տնտեսական, էներգետիկ, պարենային անվտանգության ապահովման, ինչպես նաև կայուն զարգացման առումով: Այս ռիսկերը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է էականորեն կրճատել ՋԳ արտանետումները և նպաստել կլանիչների պահպանությանը, ինչպես նաև կառավարման համակարգերը, տնտեսության ճյուղերը և ենթակառուցվածքները հարմարեցնել փոփոխվող կլիմայական պայմաններին:

Կլիմայի փոփոխությունը նշանակալի ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետության վրա: Ավելանում է բնական աղետների քանակը և փոխվում են բնական ցիկլերը (երաշտների, վաղ ցրտահարությունների, անտառային հրդեհների և ջրհեղեղների թվի աճ), կրճատվում է կենսաբազմազանությունը: Այդ պատճառով, չնայած մարդածին ՋԳ գլոբալ արտանետումներում Հայաստանի աննշան մասնաբաժնին՝ 0.02%, Երկիրն ակտիվորեն մասնակցում է կլիմայի փոփոխության դեմ պայքարի միջազգային գործընթացներին:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան (ՄԱԿ ԿՓՇԿ) 1993 թվականի մայիսին, Կիոտոյի արձանագրությունը՝ 2002 թվականի դեկտեմբերին և վերջինիս Դոհայի փոփոխությունը, ինչպես նաև Փարիզյան համաձայնագիրը՝ 2017 թվականի

փետրվարին: Փարիզյան համաձայնագիրը կլիմայի փոփոխությանը վերաբերող իրավաբանորեն պարտավորեցնող առաջին գլոբալ պայմանավորվածությունն է, որը սահմանում է կլիմայի փոփոխությանը դիմակայման պլան՝ նպատակ ունենալով գլոբալ տաքացման աճը նախաարդյունաբերական մակարդակի համեմատ պահել 2°C -ից ցածր մակարդակում, միաժամանակ ձգտելով այն հասցնել մինչև 1.5°C -ի:

Հայաստանի Հանրապետության ՋԳ արտանետումները 1990 թվականին գույքագրված 25,814.53 Գգ CO_2 համ. համեմատ 1995 թվականին նվազել էր մինչև 7,270.48 Գգ CO_2 համ.: 2019 թվականի դրությամբ դրանք կազմում են արդեն 11,150.8 հազար տոննա CO_2 համ., որից 64 տոկոսը առաջանում է էներգետիկայի ոլորտից, գյուղատնտեսության ոլորտից կազմում է 18.8 տոկոս, արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում ոլորտից՝ 11.5 տոկոս, իսկ թափոնների ոլորտից՝ 5.6 տոկոս:

Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) համաձայն 2030 թ. նպատակն է չգերազանցել լեյդոցային գազերի արտանետումների 15047 Գգ CO_2 համարժեք չափը, այսինքն նվազեցնել արտանետումները 40%-ով 1990թ. համեմատ: Մինչև 2026 թվականը Հայաստանի Հանրապետության կառավարությունը թիրախավորում է ՀՆԱ-ի տարեկան միջին աճի նվազագույն 7 տոկոս մակարդակ: Եթե ՋԳ արտանետումների աճի միտումները չզսպվեն, ապա արտանետումները համադրելի կլինեն նպատակադրվող կուտակային տնտեսական աճի մակարդակի հետ:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վերջին տարիներին Հայաստանում նկատելի քայլեր են ձեռնարկվել ազգային և ոլորտային զարգացման քաղաքականություններում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ներդրման և շեշտադրման ուղղությամբ: Այդուհանդերձ, կլիմայական նպատակները լիարժեք ձևակերպված չեն, ինչպես նաև կլիմայի փոփոխության խնդիրներն այդ ռազմավարություններում բավարար չափով հասցեագրված չեն և ավելի շատ դիտարկվում են որպես քաղաքականության լրացուցիչ, այլ ոչ թե առանցքային բաղադրիչ, թեև կլիմայի փոփոխությանն առնչվող

ոլորտների քաղաքականության մեջ գնալով ավելի շատ են ընդգծվում կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը և դրանց հասցեագրման կարևորությունը:

ՄԱԿ Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի, Փարիզյան համաձայնագրի և ոլորտում ընդունված այլ միջազգային փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված համակարգաստեղծ գործողությունների մասով Հայաստանի ստանձնած պարտավորությունների արդյունավետ իրականացումը ենթադրում է պետության ջանքերի համակարգված և հետևողական գործադրում:

Երկրի կլիմայական քաղաքականության իրականացումը ենթադրում է համապատասխան միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարական պլանավորում, ինչը պետք է արտահայտվի մի շարք փաստաթղթերի՝ ինչպես նաև դրանցում սահմանված ծրագրերի ու գործողությունների պլանների ընդունման և պարբերաբար վերանայման միջոցով: Նշված փաստաթղթերի մի մասն արդեն ընդունված է, սակայն դրանք ունեն որոշակի կենսացիկլ և, հետևաբար, պարբերաբար վերանայման կարիք: Ակնկալվում է, որ հաջորդ շրջափուլերում արդեն դրանք կբխեն օրենսդրորեն ամրագրված ելակետերից, երբ հստակ սահմանված կլինեն այդ փաստաթղթերի շրջանակները և դրանց ներկայացվող պահանջները, անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի կառավարման սխեմաները, մշակման, քննարկման և վերանայման ժամկետներն ու պատասխանատուները, հանրային մասնակցության և հաշվետվողականության ընթացակարգերը:

Միաժամանակ, կարևոր է նաև, որպեսզի ՀՀ օրենսդրությամբ կարգավորման ազդեցության գնահատման ենթակա իրավական ակտերի նախագծերը նշված գործընթացի շրջանակներում դիտարկվեն նաև կլիմայական քաղաքականությունների համատեքստում: Բացի այդ, ներկայումս, եզակի բացառություններով, գրեթե սահմանված չեն ոլորտում կիրառելի հասկացությունները, ինչը կապահովեր դրանց միատեսակ մեկնաբանությունը՝ որպես առանցքային պայման իրավական ինստիտուտների պատշաճ կարգավորման, ինչպես նաև ոլորտի օրենսդրության արդյունավետ կիրառման տեսանկյունից:

ԶԳ արտանետումների կրճատման մասով թիրախների ամրագրումը, դրանց հասնելու համար ոլորտային ռազմավարական ծրագրերի, գործողությունների

հատկորոշումն ու նախաձեռնումը, ինչպե՜րմոցես նաև թափանցիկության և հաշվետվողականության ազգային համակարգի կայացումը պահանջում են հորիզոնական և ուղղահայաց բազմաշերտ իրավահարաբերությունների կարգավորում, այդ թվում՝ ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածի մասնակիցների ներգրավմամբ: Արդյունավետ կլիմայական քաղաքականության իրականացումը ենթադրում է կառավարման տարբեր ոլորտների ու մակարդակի մարմինների ներգրավվածություն և ներդաշնակ փոխգործակցություն: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում սահմանել յուրաքանչյուրի իրավասությունը և դրանից բխող գործառույթների շրջանակը: Թեև կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության ոլորտներում որոշակի դերակատարություն պետք է ունենան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններն ու օղակները, գործող օրենսդրությամբ լիազորություններ վերապահված են միայն կառավարության կողմից լիազորված նախարարությանը: Այլ մարմիններին առանձին դեպքերում վերապահված են բավականին ընդհանրական ու դրվագային լիազորություններ, իսկ փաստացի համակարգումը կրում է իրավիճակային բնույթ՝ պայմանավորված տարբեր ծրագրերի շրջանակներում ընթացող աշխատանքներով:

Բացի ոլորտում Կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների լիազորությունների շրջանակի հստակեցումից, կարևոր է նաև ամրագրել տեղական ինքնակառավարման մարմինների հստակ լիազորությունները կլիմայի փոփոխության դիմակայման գործում՝ հաշվի առնելով այդ խնդիրներն արդյունավետ հասցեագրելու համար համայնքների ներգրավման նպատակահարմարությունն ու մանդատը: Ի լրումն ինստիտուցիոնալ կառուցվածքի սահմանման՝ կարևոր է նաև օրենքով ամրագրել իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, որոնք կարող են սահմանվել բացառապես օրենքով:

Կլիմայական քաղաքականությունների տնտեսական ու ֆինանսական գործիքները պարտադիր կամ խրախուսող գործիքներ են, որոնք ուղղված են ԶԳ արտանետումների կրճատման թիրախներին և հարմարվողականության նպատակներին հասնելուն:

Դրանց մի մասը պետք է ուղղված լինեն տնտեսվարողներին, մյուս մասը՝ նախատեսված լինեն ուղղորդելու պետական կառավարման տարբեր մակարդակներում ընդունվող որոշումները (իրավական ակտեր, օպերատիվ և այլ որոշումներ): ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ԶԳ արտանետումների նվազեցմանն ուղղված գործիքները բավականին սահմանափակ են, և ապահովված չեն կիրառության արդյունավետ գործիքակազմով, իսկ հարմարվողականության ոլորտում անհրաժեշտ գործիքները գրեթե բացակայում են: Կլիմայական քաղաքականության տնտեսական ու ֆինանսական հիմքերն ապահովելու համար կարևոր է օրենսդրությամբ ամրագրել պետության մոտեցումներն այնպիսի գործիքների առնչությամբ, ինչպիսիք են հանքահումքային վառելիքի օգտագործման կրճատմանն ուղղված միջոցները, հարկային ու մաքսային պայմանները միջավայրի կլիմայական առումով չեզոք ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերող սուբյեկտների համար, պետական բյուջեի կլիմայական նշագրումը, հարմարվողականության միջոցառումների իրականացման ֆինանսավորումը և այլն: Այդ գործիքների ներդրումը ենթադրում է բացառապես օրենսդրական ամրագրում:

Մինչ այժմ ՀՀ-ում ԶԳ արտանետումների կադաստրի, ինչպես նաև ՄԱԿ-ի ԿՓՇԿ ներքո Երկամյա թափանցիկության զեկույցների կազմման նպատակով տվյալների հավաքագրումն իրականացվել է ոչ ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով: Արդյունքում միշտ չէ, որ հնարավոր է եղել հավաքագրել բոլոր անհրաժեշտ տվյալները և լիարժեք ստուգել դրանց արժանահավատությունը՝ մի շարք օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ իրավական մեխանիզմների ու պատասխանատվության ինստիտուտի բացակայությունը: Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման մեխանիզմի (ՉՀՀ) ստեղծման պահանջը նախատեսված է ՓՀ 13-րդ հոդվածով: Մասնավորապես, 13-րդ հոդվածը սահմանում է, որ Կողմերից յուրաքանչյուրը կանոնավորապես տրամադրում է հետևյալ տեղեկությունները.

- գույքագրման մասին ազգային զեկույց մարդածին արտանետումների վերաբերյալ՝ ըստ աղբյուրների և ԶԳ կլանիչների միջոցով կուտակումների,
- տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ազգային մակարդակում սահմանված իր հանձնառությունն իրականացնելու և դրանց հասնելու ուղղությամբ

գրանցած առաջընթացին (մեղմման քաղաքականությունների և միջոցառումների իրականացման) հետևելու համար,

- տեղեկություններ կլիմայի փոփոխության ազդեցությունների և հարմարվողականության վերաբերյալ,

- տեղեկություններ անհրաժեշտ և ստացած ֆինանսական, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման վերաբերյալ:

Նշված տեղեկատվությունը հնարավորություն է տալու համապատասխան տվյալների հավաքագրման ու վերլուծության միջոցով ապահովել ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի և ՓՀ-ի ներքո երկրի ստանձնած պարտավորությունների իրականացման մոնիթորինգը, պատրաստել միջազգային հաշվետվություններ, ինչպես նաև օգտագործել հավաքագրված տվյալները երկրի կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է սահմանել կլիմայական քաղաքականության շրջանակը, կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում պետական, տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը, կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի կարգավիճակը, կլիմայական ֆինանսավորման մեխանիզմները, կլիմայական քաղաքականության կարգավորիչ գործիքները, չափումները, հաշվետվողականությունը և հավաստագրումը, կլիմայական քաղաքականության իրականացման շրջանակներում միջազգային համագործակցությունը, կլիմայական տեղեկատվության հրապարակայնությունը և մատչելիությունը, կլիմայական գիտությունների ոլորտում կրթությունը և գիտությունը, ինչպես նաև պատասխանատվությունը կլիմայական օրենսդրությունը խախտելու համար:

«Կլիմայի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան բխում է, *inter alia*, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզի կլիմայի փոփոխությանն առնչվող

գործողություններից: Ճանապարհային քարտեզում տեղ գտած միջոցառումները հիմնված են՝ Միության տարածքում ՋԳ արտանետումների քվոտաների վաճառքի համակարգը սահմանող Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 2003/87/ԵՀ հրահանգի, ինչպես նաև 2003/87/ԵՀ Հրահանգին համապատասխան ՋԳ դիտարկման և հաշվետվության վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 601/2012/ԵՄ կանոնակարգի, ՋԳ արտանետումների դիտանցման և դրանց վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու, ինչպես նաև կլիմայի փոփոխությանն առնչվող այլ տեղեկություններ ներպետական և Միության մակարդակներով ներկայացնելու մեխանիզմի մասին Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 525/2013/ԵՄ, ֆտոր պարունակող ՋԳ մասին 517/2014 ԵՄ, Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին Եվրոպական խորհրդարանի և խորհրդի թիվ 1005/2009 կանոնակարգերի վրա:

2003/87/ԵՀ Հրահանգը, որն ընդունվել է Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 13-ին, հիմնում է ՋԳ արտանետումների առևտրի սխեմա՝ Եվրոպական Միությունում՝ հայտնի որպես ԵՄ արտանետումների առևտրի համակարգ (EU ETS): Արտանետումների առևտրի համակարգը՝ արտանետումների սահմանափակման և վերահսկման համակարգ է, որն ուղղված է կլիմայի փոփոխության դեմ պայքարին, որը ենթադրում է աստիճանական մոտարկում:

2003/87/ԵՀ Հրահանգի ներքո ՀՀ ներպետական օրենսդրության մոտարկման հիմնական պարտավորությունը ենթադրում է առաջնային մոտարկում Հրահանգի 14-17-րդ հոդվածների պահանջներին, մասնավորապես՝

- Ազգային օրենսդրության մշակում/պատասխանատու իրավասու մարմնի նշանակում,
- Մոնիթորինգի, հաշվետվությունների, ստուգման (MRV) և կիրառման համակարգերի, ընթացակարգերի մշակում,
- ՋԳ արտանետումների թույլտվությունների առևտրի համակարգ՝ Արտանետումների առևտրի սխեմա (ETS):

Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման (ՉՀՀ, MRV) համակարգը ամրագրված են «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագծում:

Թափանցիկության ընդլայնված շրջանակին ինտեգրվելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգի գործարկումն ու զարգացումը («Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագծի 26-րդ հոդված):

Ամրագրվում է ԶԳ արտանետումների կադաստրը՝ որպես երկամյա պարբերականությամբ թարմացվող տվյալների շտեմարան, ինչը ներառում է տարեկան կտրվածքով արտանետված ԶԳ ծավալն ըստ ոլորտների և ԶԳ տեսակների, ԶԳ արտանետման աղբյուրների, ինչպես նաև մթնոլորտային օդից ԶԳ կլանման ցուցանիշների, բացառությամբ պաշտպանության ոլորտի արտանետումների: ԶԳ արտանետումների գույքագրումն իրականացվում է ազգային և տեղակայանքների մակարդակով: ԶԳ արտանետումների գույքագրման և կադաստրի վարման նպատակով տվյալներ են տրամադրվում պետական կառավարման համակարգի մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և ԶԳ արտանետող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: ԵՄ 2003/87 հրահանգում տրված սահմանումների համաձայն, «ջերմոցային գազեր» նշանակում է Հավելված II-ում թվարկված գազերը:

ԵՄ նշված հրահանգին (3-րդ հոդված) մոտարկելու նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում, որով ամրագրվել են ջերմոցային գազերի, ջերմոցային գազերի արտանետման թույլտվության հայտի հասկացությունները, ինչպես նաև կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները՝ ԶԳ արտանետումների գույքագրման հետ կապված, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի և ԶԳ անշարժ և շարժական աղբյուրներ ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները:

ԵՄ հրահանգի մոտարկման նպատակով, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում ամրագրվել են ԶԳ արտանետման թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանի ձևի և վարման կարգի հաստատման, ԶԳ արտանետման թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանի վարման, ԶԳ արտանետումների մոնիթորինգի

մեթոդների և մոնիթորինգի պլանի օրինակելի ձևի հաստատման, ՋԳ արտանետման առավելագույն սահմանաչափի որոշման, ՋԳ արտանետման թույլտվության հայտի կասեցման և մերժման հիմքերը, ՋԳ արտանետման թույլտվության ժամկետի սահմանման հիմքերի հետ կապված դրույթներ:

Ավիացիոն արտանետումների հետ կապված 2003/87 հրահանգի և համապատասխան կանոնակարգերի դրույթների կիրարկումը կախված է Միջազգային քաղաքացիական ավիացիոն կազմակերպության իրավակարգավորումների կիրառման ընդհանուր համատեքստից: Հրահանգի՝ ավիացիոն արտանետումների հետ կապված իրավակարգավորումների մոտարկումը նախատեսվում է ավելի ուշ կատարել:

2003/87/ԵՀ Հրահանգի 15-րդ հոդվածի մոտարկմանն է միտված «Կլիմայի մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածը՝ որակի վավերացման (վալիդացում) և որակի ստուգման (վերիֆիկացում) կանոնների հետ կապված: Հրահանգի 15-րդ հոդվածի լիարժեք և շարունակական մոտարկումն ապահովելու նպատակով, դիտարկվելու է ԵՄ 2018/2067 կամ ԵՄ 765/2008 կանոնակարգերի պահանջների մոտարկման համատեքստում:

2003/87/ԵՀ Հրահանգի 15-րդ հոդվածի մոտարկմանն է միտված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով վերանայվել են տուգանքների նշանակման հիմքերը՝ կապված ՋԳ արտանետման թույլտվության պայմանների խախտմամբ կամ առանց ՋԳ արտանետման թույլտվության գործունեություն իրականացնելու, ՋԳ արտանետման թույլտվության հայտում կեղծ տվյալներ ներառման հետ: Նախատեսվել են նաև նախազգուշացման վերաբերյալ դրույթներ՝ կապված չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգում ներառման նպատակով «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների 1-մասերով, 29-րդ և 30-րդ հոդվածների 2-րդ մասերով սահմանված տվյալներ չտրամադրելու կամ ոչ հավաստի տվյալներ տրամադրելու կամ ժամկետի խախտմամբ տվյալներ տրամադրելու կամ դրանք առանց որակի վավերացման (վալիդացման) կամ որակի ստուգման (վերիֆիկացման) կանոնների պահպանման

ներկայացնելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից «Կլիմայի մասին» օրենքի նախագծով և դրանից բխող այլ իրավական ակտերով սահմանված որակի վավերացման (վալիդացման) կամ որակի ստուգման (վերիֆիկացման) գործունեության իրականացումն առանց հավաստագրման հետ:

2003/87/ԵՀ Հրահանգի 17-րդ հոդվածի մոտարկմանն է միտված «Կլիմայի մասին» օրենքի նախագծի 35 և 36-րդ հոդվածները: Տեղեկատվության հանրային հասանելիությունը և հրապարակումը պարտադիր բնույթ է կրում՝ կայքերի և լրատվամիջոցների միջոցով:

Համաձայն 2003/87/ԵՀ Հրահանգի, անդամ-պետությունում մոտարկված օրենսդրությունը խախտելու համար կիրառվում է պատասխանատվություն: Այս հրահանգի պահանջը կարգավորվել և նախատեսվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով:

Ենթաօրենսդրական ակտի մակարդակով նաև նախատեսվում է՝ ԶԳ արտանետումների գույքագրման էլեկտրոնային շտեմարանի գործարկում: ԶԳ արտանետումների գույքագրման էլեկտրոնային շտեմարանի գործարկման աշխատանքները ընթացքում են:

Ինչ վերաբերում է նշված ԵՄ կանոնակարգերի դրույթների մոտարկմանը, ապա հարկ է նշել, որ ԵՄ կանոնակարգերի մի մասը կորցրել են իրենց ուժը և ԵՄ մակարդակով փոխարինվել են նոր կանոնակարգերով, սակայն դեռևս մաս չեն կազմում ՀՀ և ԵՄ միջև կնքված համաձայնագրի նոր ճանապարհային քարտեզի, մասնավորապես.

- 601/2012/ԵՄ կանոնակարգը՝ ԶԳ արտանետումների մշտադիտարկման և հաշվետվության մասին կանոնակարգը՝ 2018/2066 (ԵՄ) կանոնակարգով,
- 601/2012 կանոնակարգը՝ ԶԳ մշտադիտարկման և հաշվետվության վերաբերյալ 2018/2066 ԵՄ կանոնակարգով:

Արդեն իսկ ուժը կորցրած կանոնակարգերից բխող դրույթները մոտարկվել են ենթաօրենսդրական ակտերի մակարդակով, որոնց շրջանակներում՝ ԶԳ

¹ 2024 թվականի հունվարի 11-ին ՀՀ Կառավարությունն ընդունել է N 54-Ն որոշում

գույքագրման կարգի, կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգի, օգոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակների և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգի սահմանման, ինչպես նաև հիդրոֆտորածխածինների ցանկի հաստատման հետ:

4.Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքները.

Օրենքը պետք է իրավական հիմքեր ապահովի երկրում արդյունավետ կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման, դրանց ուղղված ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացիայի, ոլորտային քաղաքականությունների մեջ կլիմայական նկատառումների ներկառուցման, ինչպես նաև հանրային ֆինանսների կառավարման համակարգում կլիմայական ֆինանսների ինտեգրման, այդ գործընթացների համակարգման, հսկողության և հաշվետվողականության ինստիտուցիոնալ համակարգերի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև ոլորտի համար անհրաժեշտ իրավական զարգացումների ուղղորդման համար: Ըստ այդմ, Օրենքի ընդունմամբ ակնկալվում է.

- Հստակ սահմանված կլիմայական նպատակներ և ոլորտային զարգացման քաղաքականություններում ներկառուցված կլիմայական նկատառումներ
- Պատշաճ սպասարկվող միջազգային հանձնառություններ
- Կլիմայական քաղաքականության ռազմավարական շրջանակ
- Հստակ սահմանված իրավասությունների և պարտականությունների շրջանակ
- Ներդրված նորարարական ֆինանսավորման մեխանիզմներ
- ԶԳ արտանետումների, ստացված աջակցության և քաղաքականության իրականացման արդյունքների հաշվառման ինստիտուցիոնալ համակարգ:

5. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.

Նախագծերը մշակվել են Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ «ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԳ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի, ինչպես նաև ՄԱԶԾ «Կլիմայական խոստում Հայաստան – խոստումից ազդեցություն» ծրագրի աջակցությամբ:

6. Նախագծերի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների մասին.

Նախագծերի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա:

7. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերը ուղղակիորեն բխում են Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050 փաստաթղթով ամրագրված տեսլականից, այն է՝ մինչև 2050 թվականը ունենալ առողջ շրջակա միջավայրով, կլիմայադիմակայուն և էներգաարդյունավետ Հայաստան: Միաժամանակ, Կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը հռչակում է, որ քաղաքականությունը հիմնավորապես ուղղված է լինելու կլիմայի փոփոխության նկատմամբ երկրի դիմակայունության մակարդակի բարձրացմանը՝ հարմարվողականության լավագույն գործելակերպերի ներդրմանը՝ նպաստելու, ցածր ածխածնային զարգացման ուղղությամբ գլոբալ ջանքերին ակտիվ մասնակցության, կլիմայի փոփոխության մեղմման մասով ստանձնած միջազգային հանձնառությունների պատշաճ կատարման միջոցով: Նախագծերը ուղղակիորեն ուղղված են այս նպատակադրումների իրականացման համար իրավական հիմքեր և մեխանիզմներ ապահովելուն: